ՀԿԴ/0148/02/25
ՎԴ/0624/05/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 հուլիսի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0148/02/25 (ՎԴ/0624/05/23) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 9-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ գլխավոր դատախազությունը 2023 թվականի հունվարի 31-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության և Կադաստրի կոմիտեի՝ Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշմամբ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու և հողամասն օտարելու

իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ նշված որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և Ծաղիկ Գալստյանի միջև 2003 թվականի օգոստոսի 22-ին կնքված թիվ 232/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Ծաղիկ Գալստյանին 2003 թվականի դեկտեմբերի 12-ին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1545557 վկայականը և գրանցման միասնական 01-001-4-67 մատյանի 000007 համարի գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

3. ՀՀ գլխավոր դատախազությունը 2023 թվականի հոկտեմբերի 26-ին կրկին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության և Կադաստրի կոմիտեի՝ Երևանի քաղաքապետի 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նշված որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և Ծաղիկ Գալստյանի միջև 2003 թվականի օգոստոսի 22-ին կնքված թիվ 232/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Ծաղիկ Գալստյանին 2003 թվականի դեկտեմբերի 12-ին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1545557 վկայականը և գրանցման միասնական 01-001-4-67 մատյանի 000007 համարի գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 19-ի որոշմամբ գործը հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

6. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

7. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 14-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին, 77-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 464-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԿԴ3/0174/02/14, 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է. Երևանի քաղաքապետի 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշմամբ Ծաղիկ Գասպրյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու և հողամասն օտարելու իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից:*

Այսինքն՝ չնայած հիմնական պահանջով վիճարկվող իրավահարաբերության կողմերը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներ են, սակայն խնդրո առարկա հողամասի աճուրդի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում Երևանի քաղաքապետի՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ

(իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը):

Հետևաբար տվյալ դեպքում հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի դրության համաձայն՝ հայցադիմումը ենթակա է քննության ընդհանուր իրավասության դատարանում:

Բացի այդ, նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան, ուստի Դատարանը եզրահանգում է, որ սույն հայցադիմումը պետք է վերահասցեագրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան»[1]:

9. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1-ին կետին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունիսի 19-ի որոշմամբ սույն գործը հանձնել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) դատարանի վարույթում քննվող պետության գույքային և ոչ գույքային շահերը շոշափող այն քաղաքացիական գործերը, որոնցով անցում չի կատարվել դատաքննության փուլ, պետք է հանձնվեն բացառապես հակակոռուպցիոն դատարանի քննությանը:*

Տվյալ դեպքում, ուսումնասիրելով թիվ ՎԴ/0624/05/23 վարչական գործով ներկայացված հայցադիմումը, կից ներկայացված փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված պահանջի քննությունն անհուսափելիորեն առնչում է Հայաստանի Հանրապետության գույքային շահերին,

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 71-75:

ուսրի Դատարանը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 24-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1 կետով սահմանված կարգավորումների հիմքով թիվ ՎԴ/0624/05/23 վարչական գործը պետք է հանձնել հակակոռուպցիոն դատարանի քննությանը»[2]:

10. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ, 20-րդ, 26-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, նույն հոդվածի 2-րդ մասին, 53-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ 787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/13589/02/21, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19, 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/3859/02/17, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/4538/05/09, 2015 թվականի ապրիլի 30-ի թիվ ՎԴ/4651/05/12 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 121-122:

հակակառուպցիոն դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Սույն գործի շրջանակներում ներկայացված հայցապահանջի փաստական և իրավական հիմքերը հաշվի առնելով՝ Դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, ՀՀ գլխավոր դատախազության կողմից դատարան դիմելու և Երևանի քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու պահանջից ծագող իրավահարաբերությունները կրում են հանրային բնույթ, ուղղված են հանրային շահի սպասարկմանը, որի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ենթակա է ՀՀ վարչական դատարանին:*

Անդրադառնալով Երևանի քաղաքապետի 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով վերացնելու անվավերության հետևանքներին՝ Դատարանն արձանագրում է, որ նշված հետևանքներն ածանցվում են հիմնական պահանջից, ուստի հիմնական պահանջի՝ վարչական դատարանին ենթակա լինելու դեպքում, ածանցյալ պահանջները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ ենթակա են այն դատարանի քննությանը, որին ենթակա է հիմնական պահանջը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով սույն գործի փաստերը, հաշվի առնելով հայցի հիմքն ու առարկան, իրավահարաբերության սուբյեկտներին՝ Դատարանը գտնում է, սույն գործը ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով, հետևաբար համաձայն չէ ՀՀ վարչական դատարանի՝ գործը վերահասցեագրելու որոշման հետ, որպիսի պայմաններում՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը, գտնում է, որ վերը նշված հարցին սպառիչ պատասխան տալու և թիվ ՀԿԴ/0148/02/25 գործի ենթակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ վճռաբեկ դատարան»[3]:

[3] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 131-136:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

11. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0148/02/25 (ՎԴ/0624/05/23) գործն ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ ՀՀ կառավարության և Կադաստրի կոմիտեի, երրորդ անձ Ծաղիկ Գալստյան՝ Երևանի քաղաքապետի 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նշված որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և Ծաղիկ Գալստյանի միջև 2003 թվականի օգոստոսի 22-ին կնքված թիվ 232/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Ծաղիկ Գալստյանին 2003 թվականի դեկտեմբերի 12-ին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1545557 վկայականը և գրանցման միասնական 01-001-4-67 մատյանի 000007 համարի գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:*

12. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...).

3) հակակոռուպցիոն դատարանը»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը: (...)*

3. Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (...) դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (...)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու*

կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝*«Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով (…)»:*

12.1 Վճռաբեկ դատարանը, *ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Զարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտե՝* գործով 2023 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ անդրադառնալով մարզպետի որոշման հիման վրա պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին վեճի՝ հանրային կամ մասնավոր իրավահարաբերություններից ծագելու հարցին, եզրահանգել է. *«(…) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սակարկություններ անցկացնելու, դրանց արդյունքում պայմանագրեր կնքելու կամ դրանք անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու կարգը և հիմքերը սահմանվում և կարգավորվում են քաղաքացիական իրավական նորմերով, իսկ սակարկությունների մասնակիցներն իրավահարաբերության մեջ են մտնում մասնավոր կամքի ինքնավարությամբ, ինչն ինքնին բացառում է սակարկություններին մասնակցող անձանց վարչական կամ իշխանական և ընդհանրապես որևէ ենթակայության ներքո գտնվելու հանգամանքը:*

(…)

Վերոգրյալից հետևում է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: Վարչական մարմինը որոշակի իրավահարաբերության մեջ կարող է ներկայանալ ոչ միայն որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ նաև որպես տվյալ իրավահարաբերության մյուս մասնակիցներին հավասար սուբյեկտ (մասնավոր ինքնավարություն): Ի

տարբերություն հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկություններում որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, ով գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից[4]*:*

13. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանին է վերապահել դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերի քննությունը: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով: Այդպիսի գործերի շարքին են դասվում ընդդեմ վարչական մարմնի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց, տվյալ դեպքում՝ ՀՀ դատախազության կողմից ներկայացված այն գործերը, որոնցով վերջիններս համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, իսկ դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով

---

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Զարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտե՝* գործով 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 որոշումը:

հարուցված քաղաքացիական գործերը ենթակա են ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

Միաժամանակ, որևէ դատական գործի՝ վարչական կամ հակակոռուպցիոն դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ընդ որում, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման աճուրդի արդյունքներն ամփոփող որոշումն անվավեր ճանաչելու պահանջը բխում է մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ սակարկություններ անցկացնելու, դրանց արդյունքում պայմանագրեր կնքելու կամ դրանք անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու կարգը և հիմքերը սահմանվում և կարգավորվում են քաղաքացիական իրավական նորմերով, իսկ սակարկությունների մասնակիցներն իրավահարաբերության մեջ են մտնում մասնավոր կամքի ինքնավարությամբ, որպիսի պարագայում նշված իրավահարաբերություններում հանրային տարրի առկայությունը բացառվում է:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ գլխավոր դատախազությունը 2023 թվականի հոկտեմբերի 26-ին կրկին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության և Կադաստրի կոմիտեի՝ Երևանի քաղաքապետի 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նշված որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և Ծաղիկ Գալստյանի միջև 2003 թվականի օգոստոսի 22-ին կնքված թիվ 232/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Ծաղիկ Գալստյանին 2003 թվականի դեկտեմբերի 12-ին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1545557 վկայականը և գրանցման միասնական 01-001-4-67 մատյանի 000007 համարի գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին[5],

[5] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն հիմքով, որ չնայած հիմնական պահանջով վիճարկվող իրավահարաբերության կողմերը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներ են, սակայն խնդրո առարկա հողամասի աճուրդի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում Երևանի քաղաքապետի՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը): Հետևաբար տվյալ դեպքում հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից[6],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունիսի 19-ի որոշմամբ գտել է, որ դատարանի վարույթում քննվող պետության գույքային և ոչ գույքային շահերը շոշափող այն քաղաքացիական գործերը, որոնցով անցում չի կատարվել դատաքննության փուլ, պետք է հանձնվեն բացառապես հակակոռուպցիոն դատարանի քննությանը, սույն գործով ներկայացված պահանջի քննությունն անխուսափելիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության գույքային շահերին, ուստի սույն գործը պետք է հանձնել հակակոռուպցիոն դատարանի քննությանը[7]:

- ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ գտել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, ՀՀ գլխավոր դատախազության կողմից դատարան դիմելու և Երևանի քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու պահանջից ծագող իրավահարաբերությունները կրում են հանրային բնույթ, ուղղված են հանրային շահի սպասարկմանը, որի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճը, ՀՀ վարչական դատավարության

[6] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ենթակա է ՀՀ վարչական դատարանին[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ սույն գործով ներկայացված հիմնական պահանջն առնչվում է Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշման՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելուն, որպիսի պահանջը հայցվորը հիմնավորում է այն փաստարկներով, որ վիճարկվող որոշումը վերաբերում է այլ հասցեի հողամասի օտարմանը և որևէ առնչություն չունի Ծաղիկ Գալստյանին Երևան քաղաքի Աջափնյակ, Գ-1 թաղամաս, թիվ 57 հասցեի հողամասի աճուրդային վաճառքի հաղթող ճանաչելու հետ:

Հարկ է նշել, որ չնայած նրան, որ հայցի առարկան ձևական առումով համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վիճարկման հայցատեսակին, սակայն նշված հայցատեսակով հայցի առարկան ՀՀ վարչական դատարանի քննության առարկա կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ կողմերի միջև առաջացած վեճը ծագած լինի հանրային իրավահարաբերություններից, քանի որ ՀՀ վարչական դատարանին ենթակա են միայն հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը: Ուստի, անկախ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկին համապատասխան ձևակերպված պահանջի ներկայացումից, վեճը չի կարող ՀՀ վարչական դատարանի քննության առարկա դառնալ, եթե այն չբխի հանրային իրավահարաբերություններից:

Մինչդեռ, հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 գործով արտահայտած իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդի շուրջ ծագած իրավահարաբերությունները կրում են մասնավոր բնույթ, ըստ այդմ՝

[8] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

այդ գործընթացի արդյունքների ամփոփման իրավահարաբերությունները նույնպես մասնավոր բնույթի են, հետևաբար սույն գործով ծագած իրավական վեճը՝ Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու մասին, նույնպես կրում է մասնավոր բնույթ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով հարուցված քաղաքացիական գործերը ենթակա են ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը, իսկ սույն գործով ներկայացված վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից, ուստի սույն գործը ենթակա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

16. Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0148/02/25 (ՎԴ/0624/05/23) գործն ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ ՀՀ կառավարության և Կադաստրի կոմիտեի, երրորդ անձ Ծաղիկ Գալստյան՝ Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նշված որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և Ծաղիկ Գալստյանի միջև 2003 թվականի օգոստոսի 22-ին կնքված թիվ 232/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Ծաղիկ Գալստյանին 2003 թվականի դեկտեմբերի 12-ին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1545557 վկայականը և գրանցման միասնական 01-001-4-67 մատյանի 000007 համարի գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, ՀՀ գլխավոր դատախազության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0148/02/25 (ՎԴ/0624/05/23) գործը ենթակա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՀԿԴ/0148/02/25 (ՎԴ/0624/05/23) գործն ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ ՀՀ կառավարության և Կադաստրի կոմիտեի, երրորդ անձ Ծաղիկ Գալստյան՝ Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունիսի 17-ի թիվ 1314-Ա որոշումը՝ Ծաղիկ Գալստյանին հողամասի աճուրդային վաճառքում հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նշված որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և Ծաղիկ Գալստյանի միջև 2003 թվականի օգոստոսի 22-ին կնքված թիվ 232/5-ԱԳ առուվաճառքի պայմանագիրը, Ծաղիկ Գալստյանին 2003 թվականի դեկտեմբերի 12-ին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1545557 վկայականը և գրանցման միասնական 01-001-4-67 մատյանի 000007 համարի գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ